«Գյումրու երիտասարդական քաղաքականության մշակում և ներդրում»
Տեղական փորձագետի առաջադրանքի
տեխնիկական բնութագիր

Անվանում	Երիտասարդական ոլորտի տեղական փորձագետ
Գործունեության վայր	ք. Գյումրի

Ծրագրի համառոտ նկարագրությունը.

«Կոմպասս գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ-ն և «Գյումրու երիտասարդական խորհուրդ» անկախ փորձագիտական խումբը համատեղ իրականացնում են «Գյումրու երիտասարդական քաղաքականության մշակում և ներդրում» ծրագիրը՝ ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ:
Ծրագրի թեման ընդգրկում է Գյումրու երիտասարդական քաղաքականությունը (այսուհետ՝ ԳԵՔ):
Ծրագրի նպատակն է նպաստել Գյումրու երիտասարդության կյանքի որակի բարելավմանն ու հիմնախնդիրների լուծմանը՝ կարիքների վրա հիմնված տեղական երիտասարդական քաղաքականության մշակման ու կիրառման միջոցով:

Փորձագետի հիմնական պարտականությունները.

- Գյումրու երիտասարդության վիճակի առկա հետազոտությունների ու վերլուծական փաստաթղթերի ուսումնասիրություն,
- ֆոկուս-խմբային քննարկումների կազմակերպում երիտասարդական խմբերի հետ,
- ԳԵՔ փաստաթղթի նախնական տարբերակի մշակում,
- ԳԵՔ փաստաթղթի նախնական տարբերակի փորձագիտական քննարկումների կազմակերպում,
- ԳԵՔ փաստաթղթի վերջնական տարբերակի մշակում:

Անհրաժեշտ որակավորումը.

- փորձագիտական աշխատանքի առնվազն 2 տարվա փորձ
- ֆոկուս խմբային քննարկումներ կազմակերպելու փորձ,
- քաղաքացիական հասարակության կառույցների հետ դրական աշխատանքային հարաբերություններ կառուցելու և նրանց հետ համագործակցելու կարողություն,
- գրավոր և բանավոր հայերենի գերազանց իմացություն,
- Գյումրու երիտասարդական ոլորտի առանձնահատկությունների քաջատեղյակություն,
- Գյումրու երիտասարդական ոլորտում աշխատելու առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ,
- անգլերենի իմացությունը ցանկալի է:

Ժամանակացույցը.

սկիզբը՝ 2016թ. հունիսի 1,

ավարտը՝ 2016թ. օգոստոսի 30:

Աշխատանքները պետք է իրականացվեն ըստ ներկայացված ժամանակացույցի:

Դիմումների ներկայացման կարգը.

հետաքրքրված անձինք կարող են ուղարկել՝

- կենսագրականը (CV)՝ ընդգծելով նման առաջադրանքներ կատարելու իրենց փորձը,
- հետաքրքրվածության նամակ,
- ԳԵՔ փաստաթղթի առաջարկվող կառուցվածք:

Անհրաժեշտ փաստաթղթերն ուղարկել **compassgyumri@gmail.com** էլ. հասցեին՝ մինչև **27.05 2016թ**. ներառյալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ծրագրի ղեկավար Հայկարամ Դրմեյանին՝ հեռ. (+374) 98 18 15 19, էլ. հասցե՝ drmeyan92@gmail.com: